Լրացուցիչ տեղեկություններ DAAD-ի գիտահետազոտական կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում բժշկագիտական առարկաների դիմորդների համար

Գիտահետազոտական կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում (ներառյալ Sandwich ծրագիրը) DAAD-ն կրթաթոշակներ է տրամադրում ուսումնական և գիտահետազոտական գործուղումների համար (այդ թվում նաև ատամնաբուժություն, անասնաբուժություն մասնագիտությունների համար)։

Կրթաթոշակներ բժշկագիտական մասնագիտությունների դիմորդների համար.

ա) Հետևյալ գիտահետազոտական նպատակների համար տրամադրվում են մինչև մեկ տարի տևողությամբ կրթաթոշակներ (առանց երկարացման պայմանի)

- Գիտահետազոտական պրոյեկտներ/Գիտահետազոտական աշխատանքներ
- Հայրենիքում թեկնածուական ատենախոսության պաշտպանության նպատակով համապատասխան նյութերի հավաքագրում

DAAD-ն չի ֆինանսավորում օրդինատուրայի ամբողջական կրթությունը Գերմանիայում։

բ) Երկարացման պայմանով գիտահետազոտական կրթաթոշակ կարող է տրվել միայն բնագիտության բնագավառում թեկնածուական ատենախոսության պաշտպանության համար (օր. Dr.rer.nat., Dr. rer. medic.)։ Կրթաթոշակ կարող է տրվել երեք, բացառիկ դեպքերում չորս տարով։

Երկարացման պայմանով կրթաթոշակ բժշկագիտական ատենախոսության պաշտպանության նպատակով (օր. Dr. med., Dr. med. vet., Dr. med. dent.) չի տրվում։